ԿՐԿՆՕՐԻՆԱԿ

Արցախի Հանրապետությունում 2020 թվականի համապետական ընտրությունների դիտորդական առաքելություն

Դրամաշնորհային մրցույթի հայտ

Իրականացնող կազմակերպության՝ անվանումը և նպատակները

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» խորհրդատվական հասարակական կազմակերպությունը շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է: Կազմակերպությունը քաղաքական, կրոնական, արհեստակցական նպատակներ չի հետապնդում, որևէ կուսակցությանը չի հարում:
Կազմակերպության սկզբունքներն են՝ օրինականությունը, հրապարակայնությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը անդամության կամավորությունը, անդամների իրավահավասարությունը, ինքնակառավարումը, ղեկավարման կոլեգիալությունը և հաշվետվողականությունը:
Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվորմ է ԱՀ քաղաքացիական օրենսգրքով, «Հասարակական կազմակերպությունների մասին» ԱՀ օրենքով, իրավական այլ ակտերով և կանոնադրությամբ:
Կազմակերպության անվանումն է՝
հայերեն լրիվ՝ «ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» խորհրդատվական հասարակական կազմակերպություն, (կրճատ՝ ԻՔՄ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԿ)
ռուսերեն լրիվ՝ Консультативная общественная организация"СТЕПАНАКЕРТСКИЙ ОФИС СОЮЗА ИНФОРМИРОВАННЫХ ГРАЖДАН", (կրճատ՝ ОО СТЕПАНАКЕРТСКИЙ ОФИС СИГ)
անգլերեն լրիվ՝ “UNION OF INFORMED CITIZENS STEPANAKERT OFFICE” Consulting Non-Governmental Organization, (կրճատ՝ UIC STEPANAKERT OFFICE NGO):
Կազամկերպության նպատակներն ու խնդիրներն են.

1. քաղաքացիական կրթությունը,
2. լրատվական գործունեության իրականացումը,
3. գիտական և կրթական ծրագրերի իրականացումը,
4. ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցերը,
5. քաղաքացիական նախաձեռնությունների աջակցումը,
6. հանրային մարմինների հետ քաղաքացիական երկխոսությունների մեխանիզմների ձևավորումը և կատարելագործումը,
7. ԱՀ օրենսդրության կատարելագործման նպաստումը,
8. վարորդների և սպառողների իրավունքների պաշտանությունը,
9. ԱՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառույթների իրագործումը:

Նպատակների և խնդիրների իրականացման համար կազմակերպությունն իրավունք ունի.

1. տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,
2. կազմակերպել և անցկացնել խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր,

3. օրենքով սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքներն ու օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,
4. համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններինպահպանելով իրինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,
5. իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,
6. հիմնադրել զանգվածային լրատվության միջոցներ,
7. ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին,
8. ձեռք բերել, ստանալ, վարձակալել, վարձակալության տալ անշարժ գույք, հիմնական միջոցներ, տրանսպորտային միջոցներ, օրենքով չարգելված այլ գույք,
9. կնքել համաձայնագրեր ու պայմանագրեր այլ կազմակերպությունների հետ, իր անդամներին գործուղել արտերկիր, այլ երկրներից հրավիրել քաղաքացիներ, այլ պետություններում ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան,
10. իրականացնել ընտրությունների դիտորդություն և օրենքով թույլատրված տեղեկությունների ստացման այլ գործառույթներ,
11. իրականացնել գիտահետազոտական ուսումնասիրություններ, փնտրել և ստանալ տեղեկություններ,
12. իրականացնել քնարկումներ, լսումներ, հանդիպումներ, բանավեճեր, լրագրողական հետազոտություններ և սեմինարներ,
13. Իրականացնել կանոնադրությամբ նախատեսված և ԱՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

Դրամաշնորհի նպատակն իրականացնելուն միտված միջոցառումների/մոտեցումների նկարագիրը, և դրանց նպատակահարմարության հիմնավորումը, հնարավոր ռիսկերը և դրանց լուծմանն ուղղված գործողությունները

Արցախի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունից հետո առաջին համապետական ընտրությունները տեղի կունենան 2020-ի մարտի 31-ին, և չնայած ներկայիս

օրենքով ընտրախախտումները և կեղծիքները բացառելու տարբեր մեխանիզմների կիրառմանը, ազատ, արդար, թափանցիկ ընտրություններ արձանագրելու ճանապարհին դեռ կան բազմաթիվ մարտահրավերներ: Դեռևս բաց են մնում մի շարք խնդիրներ, որոնցից է քվեարկության գաղտնիության մեխանիզմների ապահովումը՝ քվեարկության ծրարների բացակայության պայմաններում:

Մեր կողմից իրականացված 2019թ. սեպտեմբերի 8-ի ՏԻՄ ընտրությունների դիտորդական առաքելության շրջանակներում դիտորդների կողմից արձանագրվել են տարբեր ընթացակարգային խախտումներ (տե՛ս զեկույցը https://uic.am/wp-content/uploads/2019/12/ArtsakhReport-RS_ARM.pdf): Ճիշտ է՝ ընտրությունների կազմակերպման և իրականացման համար պատասխանատու հանրային կառավարման մարմինները գործադրել են հնարավոր միջոցները՝ ընտրությունները առավել ժողովրդավարական ստանդարտներին համապատասխան անցկացնելու համար, այդուհանդերձ, քվեարկության գաղտնիության, թեկնածուների կողմից հանրային ռեսուրսների հավասար հասանելիության, հնարավոր ընտրախախտումների կանխարգելման և մի շարք այլ հարցերում առկա էին էական խնդիրներ:

Արցախում ժողովրդավարական սկզբունքների զարգացումն ու ձեռքբերումները պետք է պահպանվեն և ամրապնդվեն ընտրությունների ընթացքում՝ խախտումների կանխման, արձանագրման և հետագա բարեփոխումների համար առաջարկների գեներացման միջոցով:

Մեր կողմից ներկայացվող ծրագիրը միտված է Արցախի ժողովրդի ազատ կամարտահայտության դրսևորման համար հավելյալ երաշխիքների ապահովմանը, Արցախում ժողովրդավարական գործընթացների խթանմանը:

Ծրագիրը նախատեսվում է սկսել 2020թ մարտի 1-ին և ավարտել հուլիսի 31-ին:

Ծրագրի նպատակը

Նպաստել Արցախի հանրապետության ժողովրդավարական գործընթացների կայացմանը՝ կարճաժամկետ դիտորդական առաքելության իրականացման և մեդիայի մշտադիտարկման գործիքների կիրառմամբ ընտրական պրոցեսները գնահատելու, ինչպես նաև ընտրողների իրազեկվածությունը բարձրացնելու միջոցով:

Ենթանպատակ 1

Նպաստել ազատ, արդար թափանցիկ համապետական ընտրությունների կայացմանը՝ կարճաժամկետ դիտորդության իրականացման միջոցով:

Արդյունք 1

Կարճաժամկետ դիտարկման իրականացում Արցախի հանարապետության բոլոր ընտրատարածքների 60 տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև 10 արագ արձագանքման շրջիկ խմբերի միջոցով: Յուրաքանչյուր խմբում՝ 2-ական դիտորդով:

Դիտարկման հատուկ մեթոդաբանության կիրառմամբ նախատեսվում է ընտրության օրը տեղամասային կենտրոնում և շրջակայքում տեղի ունեցող խախտումների բացահայտում, արձանագրում, կանխում և արձագանքում:

Գործողություններ 1

Այս ենթանպատակի համար նախատեսված հիմնական գործողություններն են՝

1 5 դասընթացավարների վերապատրաստում, որոնք այնուհետև վերապատրաստելու են կարճաժամկետ դիտորդներին

2. 5 իրավաբանների վերապատրաստում՝ քվեարկության օրը դիտորդների կողմից արձանագրված ընտրախախտումները վերլուծելու և գնահատելու համար և կարճաժամկետ դիտորդներին իրավաբանական աջակցություն ցուցաբերելու համար

3. Դիտորդների ընտրություն և վերապատրաստում

4. Վիճակագրորեն ընտրված 60 ընտրատեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների դիտարկում՝ 120 տեղամասային և 20 շրջիկ դիտորդների միջոցով՝ ուշադրության կենտրոնում պահելով.

1. Հանձնաժողովի նիստերը

2. Իրավիճակը տեղամասերի շուրջը ՝ ժամը 14:00-ի և 20:00-ի դրությամբ
3. Իրավիճակը տեղամասերում՝ ժամը 14:00-ի և 20:00-ի դրությամբ
4. Արդյունքների ամփոփումը
5. Տարածքային ընտրական հանձնաժողովների գործունեությունը
6. Իրավիճակը ընտրական տեղամասի շրջակայքում

5. Իրավաբանական օգնության ցուցաբերում, ընտրական խախտումների վերլուծություն և հաղորդումների ներկայացում վերադաս ընտրական հանձնաժողովներին և դատական մարմիններին՝ խախտված իրավունքները վերականգնելու համար:

Դիտարկման ենթակա ընտրատեղամասերը կընտրվեն ըստ վիճակագրական ընտրանքի՝ հիմնվելով բնակչության թվաքանակի, ընտրատեղամասերի քանակի և 2019 ՏԻՄ ընտրությունների ընթացքում գրանցված մասնակցության մակարդակի վրա:

Ենթաանպատակ 2

Նպաստել քաղաքական կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) և նախագահի թեկնածուների լուսաբանման և քարոզչության հավասարության ապահովմանը մեդիայի մշտադիտարկման միջոցով:

Արդյունք 2

Ծրագրի արդյունքում կբարձրանա հանրային իրազեկվածությունը մեդիամանիպուլիացիաների և լուսաբանման հավասարության մակարդակի վերաբերյալ: Ծրագիր արդյունքում նաև ցույց կտրվի՝ ինչ ազդեցություն կարող են ունենալ փաստացի այլ երկրի (Հայաստանի Հանրապետություն) տարածքում գործող լրատվամիջոցները և հեռուստաալիքները Արցախի ընտրություններում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախում դրանք մեծ լսարան ունեն և փաստացի չեն կանոնակարգվում քարոզարշավի ժամանակ:

Գործողություններ 2

Հայցվող դրամաշնորհի շրջանակում նախատեսվում է իրականացնել նաև մեդիայի մշտադիտարկում՝ հաշվի առնելով լրատվամիջոցների և հեռուստաալիքների դերը քարոզարշավի լուսաբանման գործում:

Ընդհանուր առմամբ, ընտրությունների ժամանակ մեդիա մոնիտորինգը հնարավորություն է տալիս չափել ընտրութուններում առաջադրված թեկնածուների և կուսակցությունների հավասար լուսաբանումը, նրանց ներկայությունը կամ բացակայությունը մամուլում,

ընտրական գործընթացների և թեկնածուների հավասար և ոչ կանխակալ լուսաբանումը, ընտրողների պատշաճ իրազեկումը իրենց իրավունքներին:

Հայաստանում և Արցախում վերջին ընտրությունների փորձը ցույց է տալիս, որ քարոզարշավի ընթացքում և քվեարկության բուն օրը ընտրախախտումների թիվը զգալիորեն նվազել է: Դրան զուգահեռ, սակայն, փորձեր են կատարվում հասարակության կարծիքի վրա ազդել մանիպուլյացիաների, փաստերի սխալ կամ թերի ներկայացման կամ մեկնաբանության ճանապարհով: Այդ նպատակին հասնելու համար ընտրություններին մասնակցող կուսակցությունների և թեկնածուների համար կարևոր գործիք է հանդիսանում մեդիան, որի մի ստվար մասն, ի դեպ, թե՛ Հայաստանում, թե՛ Արցախում այս կամ այն չափով փոխկապակցված է կուսակցությունների և քաղաքական գործիչների հետ:

Ծրագիրը նպատակ ունի ընտրական քարոզարշավի ընթացքում հանրային վերահսկողություն սահմանել առավել մեծ մասսայականություն ունեցող մեդիա ռեսուրսների (հեռուստատեսություն, առցանց լրատվամիջոցներ, սոցցանցեր) վրա, զեկույցների և անհրաժեշտության դեպքում առանձին հայտարարությունների միջոցով կանխել դրանց կողմից տարածվող ապատեղեկատվությունը: Նման վերահսկողությունը մի կողմից կարող է նպաստել՝ քաղաքացիների՝ անաչառ և ոչ կանխակալ ինֆորմացիա ստանալու, մյուս կողմից՝ թեկնածուների՝ հավասար լուսաբանված լինելու իրավունքին: Ծրագրի արդյունքում կբարձրանա հանրային իրազեկվածությունը մեդիամանիպուլիացիաների և անհավասար լուսաբանման վերաբերյալ: Ծրագիր արդյունքում նաև ցույց կտրվի՝ ինչ ազդեցություն կարող են ունենալ փաստացի այլ երկրի (Հայաստանի Հանրապետության) տարածքում գործող լրատվամիջոցները և հեռուստաալիքները Արցախի ընտրություններում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արցախում դրանք մեծ լսարան ունեն և փաստացի չեն կանոնակարգվում քարոզարշավի ժամանակ:

Մեդիա մոնիթորինգի շրջանակում առաջ եկող միակ ռիսկն այն է, որ հայաստանյան լրատվամիջոցները և հեռուստաալիքները ընդհանրապես չանդրադառնան արցախյան ընտրություններին: Այնուամենայնիվ այս ռիսկի տոկոսը բարձր չէ՝ հաշվի առնելով ընտրությունների կարևորությունը և դրանց նկատմամբ հանրության ուշադրությունը: Իսկ նման սցենարի առաջացման դեպքում կկրճատվի մոնիթորինգի մասնագետների թիվը:

Ենթանպատակ 3

Նպաստել ընտրական գործընթացների և օրենսդրության բարելավմանը, ինչպես նաև ընտրությունների մասին օբեկտիվ տեղեկատվության տարածմանը՝ դիտորդության և մեդիայի մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ զեկույց պատրաստելու և ընտրական օրենսգրքում հետագա փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների մշակման միջոցով:

Արդյունք 3

Համապարփակ զեկույցի պատրաստում, որը կներառի քվեարկության օրը դիտորդների կողմից իրականացված դիտարկման արդյունքները, տեղամասում, շրջակայքում և տարածքային հանձնաժողովներում արձանագրված հիմնական ընթացակարգային խախտումները, իրավասու մարմինների գործողությունները խախտումների առնչությամբ, խախտումների ազդեցությունը ընտրությունների արդյունքների վրա, ինչպես նաև մեդիա մոնիթորինգի արդյունքները: Այն կունենա նաև ընդհանուր եզրակացությունների ու ԱՀ Ընտրական գործընթացների և օրենսգրքի փոփոխությանը միտված առաջարկությունների բաժիններ: Միջազգային հանրության՝ ԱՀ ընտրությունների մասին օբեկտիվ տեղեկացվածության բարձրացում:

Գործողություններ 3

- Դիտորդների կողմից լրացված դիտարկման քարտերի տվյալներն առցանց ռեժիմով վարվող ինֆորմացիոն բազայում հավաքագրելու համար 9 մուտքագրողների ընտրություն և վերապատրաստում
- Քվեարկության օրը նախապես որոշված ժամանակացույցով դիտարկման արդյունքների մուտքագրում
- Կաճաժամկետ դիտարկման և իրավաբանների գործողությունների արդյուքնում ստացված ողջ տեղեկատվության վերլուծություն
- Խախտումների հետագա նվազեցման և օրենսդրության մեջ բացթողումները վերացնելու վերաբերյալ առաջարկությունների մշակում
- Ամփոփում զեկույցի մեջ և հայերեն ու անգլերեն զեկույցի հրապարակում
- Զեկույցի ներկայացում շահարգիռ կողմերին և տարածում կազմակերպության կայքի և սոցիալական ցանցերի միջոցով:

Հաշվի առնելով մեր կազմակերպության թիմի բազմամյա փորձը ընտրական գործընթացների դիտարկման և հատկապես կարճաժամկետ դիտորդություն իրականացնելու մեջ՝ լուրջ մարտահրավերներ և ռիսկեր չենք կանխատեսում: Հնարավոր է՝ որոշ ընտրված դիտորդներ մինչև ընտրության օրը հրաժարվեն անձնական տարբեր հանգամանքների պատճառով: Սակայն այս մասով մտահոգվելու հարկ չունենք, քանի որ առկա է 500-ից ավելի դիտորդների բազա, որոնք իրենց պատրաստակամությունն են հայտնել ներգրավվել Արցախի համապետական ընտրությունների դիտորդական առաքելության մեջ: Նախատեսում ենք ունենալ վերապատրաստված դիտորդների պահուստային ցանկ, որից կարող ենք ցանկացած պահի դիտորդներ ներգրավել:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվելու ամփոփիչ զեկույցի կազմման որակին: Նախատեսվում է տպագրել 200-ից ավել օրինակ զեկույց:

Ենթանպատակ 4

Նպաստել ընտրողների իրավագիտակցության բարձրացմանը հանրային իրազեկման արշավի միջոցով:

Արդյունք 4

Ծրագրի արդյունքում Արցախի հանրությունը ավելի լավ կիրազեկվի իր ընտրական իրավունքների, այդ իրավունքների իրացման, ընտրվող մարմինների լիազորությունների և ընտրախախտումների հանրային վտանգավորության մասին, ինչը ընտրությունները կդարձնի ավելի ժողովրդավար:

Գործողություններ 4

Այս ենթանպատակն իրագործելու համար պլանավորվում են հետևյալ գործողությունները.

- Արտաքին սոցիալական գովազդի տեղադրում բիլբորդների, շենքերի պատերի և/կամ ձգապաստառների տեսքով (նվազագույնը 10 պաստառ):
- Անիմացիոն տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում հեռուստատեսությամբ, ինչպես նաև տարածում սոցիալական ցանցերի վճարովի ծառայությունների միջոցով (6 տեսահոլովակ):

Դիտարկման եղանակը (նախընտրական և հետընտրական շրջանի՝ երկարաժամկետ դիտորդություն, քվեարկության օրվա՝ կարճաժամկետ դիտորդություն), իսկ դիտարկման բաղադրիչների առկայության դեպքում նաև բաղադրիչները (մեդիայի մոնիտորինգ, ընտրողների ցուցակների ճշգրտության մոնիտորինգ, նախընտրական փուլում ընտրողների հետ աշխատանք և այլն), նախատեսվող դիտորդների թիվը

ԱՀ համապետական ընտրությունների դիտարկումն իրականացվելու է կարճաժամկետ դիտորդական առաքելության և մեդիայի մոնիթորինգի կիրառմամբ: Կարճաժամկետ դիտորդական առաքելությունը ապահովելու է քվեարկության օրվա գործընթացների վերաբերյալ համակողմանի տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն՝ ձգտելով քաղաքացիական վերահսկողության միջոցով նպաստել ազատ և թափանցիկ ընտրությունների կայացմանը և ընտրախախտումների բացառման մեխանիզմների հետագա բարելավմանը:

Կարճաժամկետ դիտորդության մեջ ներգրավված են լինելու դիտորդներ ինչպես Արցախից, այնպես էլ Հայաստանի տարբեր մարզերից (հիմնականում՝ Սյունիքի մարզից): Դիտորդները աշխատելու են զույգերով՝ համագործակցելով և փոխլրացնելով միմյանց աշխատանքը:

Կարճաժամկետ դիտարկում ընտրական տեղամասերում իրականացվելու է առնվազն 120 դիտորդների միջոցով՝ դիտարկման մի քանի տեսակի քարտերի հիման վրա: Արցախի հանրապետությունում ձևավորվող 281 տեղամասերից վիճակագրական ընտրանքի միջոցով առանձնացված 60 տեղամասային ընտրական հանձնաժողովները դիտարկվելու են առավոտյան ժամը 7:00-ից մինչև արդյունքների ամփոփման ավարտը և արձանագրությունների կազմումը:

10 արագ արձագանքման շրջիկ խմբեր՝ 2-ական դիտորդներով ամբողջ օրը շրջելու են ընտրատեղամասերի և թեկնածուների շտաբների տարածքներում՝ հնարավոր ուղղորդման, ընտրակաշառքի բաժանման, վերահսկման մեխանիզմների կիրառման դեպքերը արձանագրելու նպատակով: Վերջինները հարկ եղած դեպքում այցելելու են նաև ընտրական տեղամասեր՝ արտակարգ իրավիճակներում, լուրջ ընտրախախտումների ժամանակ համապատասխան գործողությունների ձեռնարկման անհրաժեշտության, գործընկեր դիտորդների նկատմամբ ճնշումների դեպքերում:

Տարածքային ընտրական հանձնաժողովներում դիտարկումներն իրականացվելու են քվեարկության օրը ժամը 20:00-ից սկսած մինչև բոլոր տեղամասային հանձնաժողովներից արդյունքների, ընտրական փաստաթղթերի ստացման ու աղյուսակավորման ավարտը:

Պահպանելով ԱՀ Ընտրական օրենսգրքի դրույթները՝ դիտորդները հնարավորության դեպքում լուսանկարելու և տեսանկարահանելու են ընտրախախտումները՝ հավաքագրելով փաստական տվյալներ: Անհրաժեշտության դեպքում կատարվելու ենք գրառումներ ՏԸՀ գրանցամատյաններում:

Հաշվի առնելով նախկին փորձը և հնարավոր ռիսկերը կարգավորելու անհրաժեշտությունը՝ ավելի քան 170 դիտորդներ վերապատրաստվելու են, դրանցից ընտրվելու են 160-ը, որոնցից շուրջ 20-ը ընդգրկվելու են պահուստային ցանկում՝ պատրաստ ցանկացած պահի ներգրավվելու գործընթացում:

5 հոգուց բաղկացած իրավաբանների խումբը ողջ օրը դիտորդներին իրավաբանական խորհրդատվություն է տրամադրելու և ձեռնարկելու է համապատասխան գործողություններ ընտրական իրավախախտումների կանխման, արձանագրման և հետագա իրավական գործընթացների համար:
Շուրջ 9 մուտքագրողներ քվեարկության ողջ օրը աշխատելու են զանգերի կենտրոնում՝ էլեկտրոնային բազայում հավաքագրելով դիտորդների կողմից լրացված դիտարկման քարտերի տեղեկատվությունը: Ընտրախախտումների համաժամանակյա գրանցումը էլեկտրոնային բազայում հնարավորություն կտա արագ արձագանքելու և առաքելության ողջ թիմի ջանքերով ու ընտրական գործընթացների պատասխանատուների հետ համագործակցությամբ կանխելու, վերացնելու, արձանագրելու դրանք:

Դիտորդների թվով 6 համակարգողներ ըստ ընտրված դիտորդների բնակության տարածքների կզբաղվեն կազմակերպչական հարցերով՝ ապահովելով դիտորդների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին, նրանց անձնագրային տվյալների հավաքագրումն ու պայմանագրերի, ակտերի, ինչպես նաև դիտարկման փաթեթների ու վկայականների փոխանցումը:

Ըստ կանխատեսումների և օրենսդրական կարգավորումների, հնարավոր է ընտրությունների երկրորդ փուլ: Այդ պարագայում մեր կարճաժամկետ դիտորդական առաքելությունը կդիտարկի նաև երկրորդ փուլը՝ նույն մեթոդաբանությամբև գերակշռապես նույն կազմով:

Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակը պատրաստվում է քարոզարշավի ողջ ընթացքում ընդհուպ մինչև քվեարկության օրը իրականացնել մեդիա մոնիթորինգ, որով նախատեսվում է քանակական և որակական վերլուծության ենթարկվել այդ ժամանակահատվածում մամուլում տեղ գտած ինֆորմացիան:
Մասնավորապես, մշտադիտարկման կենթարկվեն արցախյան հեռուստաալիքներն ու լրատվամիջոցները՝ Արցախ TV-ն և artsakhpress.am-ը, ինչպես նաև հայաստանյան 5 հեռուստաալիք և 5 առցանց լրատվամիջոց: Նախատեսվում է մշտադիտարկման ենթարկել նաև Facebook սոցցանցում տարվող քարոզարշավը: Առանձնակի ուշադրության տակ կպահվեն Արցախի և Հայաստանի հանրային հեռուստաալիքները:
Չնայած հայաստանյան լրատվամիջոցները Արցախի ընտրությունների քարոզարշավի ընթացքում չեն ենթարկվում իրավական կարգավորումների, այնուամենայնիվ, այս տիրույթում կատարվող ուսումնասիրությունները թույլ կտան գտնել հասարակական կարծիքը մանիպուլացնող գործիքները, ինչը հետագայում կարող է օգնել մեխանիզմներ մշակելու դրանց հակազդման համար:
Նախատեսվում է, որ մեդիա մոնիթորինգի թիմը բաղկացած կլինի 5 անդամներից՝ մեկ համակարգող և 4 մոնիթորինգի մասնագետ:

Տեղեկություններ ծրագրում նախատեսվող հիմնական աշխատակազմի մասին, նրանց փորձառությունն ու պարտականությունները

Ընդհանուր դիտորդությունը համակարգելու է Դանիել Իոաննիսյանը, ով ընտրական գործընթացների դիտակման 12-ից ավելի տարվա փորձառություն ունի: Իոաննիսյանը 2007 թվականից ի վեր եղել է վստահված անձ, ՏԸՀ անդամ, քարտուղար, նախագահ, «Ժառանգություն» կուսակցության՝ ընտրախախտումների դեմ պայքարի համակարգող, ԿԸՀ-ում ու վարչական դատարանում դաշինքի ներկայացուցիչ, ապա, դուրս գալով կուսակցությունից և հիմնելով «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ն համահամակարգել է ընդդիմության և քաղհասարակության՝ ընտրական բարեփոխումների

միասնական պահանջների ձևավորումը, մասնակցել է «4+4+4» ֆորմատով բանակցություններին, ԿԸՀ և Ոստիկանության՝ ընտրությունների հետ կապված ենթաօրենսդրական բազայի ձևավորման աշխատանքներին, եղել է «Անկախ դիտորդ» դաշինքի հանգուցային պատասխանատուներից՝ 2016-ից 2018 թվականների բոլոր մեծ ընտրություններում: 2018 թվականին ՀՀ Վարչապետի հրամանով Իոաննիսյանը նշանակվեց ընտրական բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար, իսկ 2020 թվականին՝ սահմանադրական բարեփոխումների հանձնաժողովի անդամ: Կցվում է CV-ն:

Կարճաժամկետ դիտորդության բաղադրիչը ղեկավարելու է Հերմինե Գասպարյանը, ով հասարակական ոլորտում ծրագրերի համակարգման և ղեկավարման 10 տարվա փորձառություն ունի: Ներգրավված է եղել ինչպես տեղական այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող համայնքային զարգացման, երիտասարդության և քաղաքացիական հասարակության կառույցների հզորացման ծրագրերում: 2015 թվականից ներգրավված է եղել բոլոր ընտրությունների դիտորդական առաքելություններում՝ որպես դասընթացավար, համակարգող և տվյալներ մուտքագրող: Այս ժամանակահատվածում վերապատրաստել է հարյուրավոր դիտորդների, այդ թվում ԱՀ 2019 թվականի ՏԻՄ ընտրությունների, տիրապետում է ՀՀ և ԱՀ ընտրական օրենսգրքերին և հարակից իրավական ակտերին: ԱՀ-ում եղել է նաև կարճաժամկետ տեղամասային դիտորդ և պատկերացնում է դիտորդի պրակտիկ աշխատանքը և Արցախի ընտրական մշակույթի առանձնահատկությունները: Կցվում է CV-ն:

Ինչ վերաբերում է մեդիա մշտադիտարկմանը՝ այն համակարգելու է ԻՔՄ մեդիա մշտադիտարկման բաժնի համակարգող Վիկտորյա Անդրեասյանը, որն ունի մեդիա դաշտում աշխատանքի 10 տարվա փորձ: 2017 թվականին Անդրեասյանը աշխատել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության մեդիա մշտադիտարկման թիմում, իսկ 2018թ-ից արդեն որպես Իրազեկ քաղաքացիների միավորման աշխատակից՝ ներգրավվել է ընտրությունների դիտարկման 3 առաքելություններում (2018թ. Երևանի ավագանու ընտրություններ, 2018թ. ԱԺ ընտրություններ, 2019թ. Արցախի ՏԻՄ ընտրություններ)՝ որպես քարոզարշավի մեդիա մոնիթորինգի համակարգող: Կցվում է CV-ն:

Ծրագրի գլավոր իրավաբանը լինելու է Վաղարշ Աղաբեկյանը, ով համակարգելու է մյուս իրավաբանների վերապատրաստումը և դիտորդների իրավաբանական աջակցությունը, ինչպես նաև մասնակցելու է տվյալների վերլուծության աշխատանքներին: Աղաբեկյանը 2013թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 2013-2016թ. փետրվար ծառայել է ԱՀ ոստիկանության քննչական վարչությունում՝ որպես քննիչ: 2017թ. փետրվարի 14-ից մինչև 2018թ. օգոստոսի 2-ը աշխատել է ԱՀ Շահամույանի շրջանի դատախազությունում՝ որպես դատախազության դատախազ: 2018թ. օգոստոսի 6-ից մինչև 2019թ. մայիսի 2-ը աշխատել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի քննչական վարչությունում՝ որպես 2-րդ բաժնի քննիչ: 2019թ սեպտեմբերից դասավանդում է Արցախի պետական համալսարանի պատմաիրավագտիտական ֆակուլտետում: 2019թ. հոկտեմբերից

աշխատում է «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտ քաղաքի գրասենյակ» ՀԿ-ում: Կցվում է CV-ն:

Ծրագիրը և դրա վարչական ապահովումը ղեկավարելու է «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ գործադիր տնօրեն Հովսեփ Ղազարյանը: Կցվում է CV-ն:

Նախատեսվում է, որ առաքելությունն ունենալու է 19 հոգի հիմնական աշխատող, 5 թրեյներ 25 հոգի քվեարկության օրվա անձնակազմ և նվազագույնը 140 դիտորդ:

Դիմող կազմակերպության ընտրական գործընթացների դիտարկման փորձառությունը, ներառյալ՝ վայրը, տարեթիվը, դիտարկման եղանակը և առկայության դեպքում նաև դրա բաղադրիչները, աշխարհագրական ծածկույթը, հրապարակված զեկույցների հղումները

«Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ-ն դիտորդություն է իրականացրել 2019թ սեպտեմբերի 8-ին կայացած Արցախի ՏԻՄ ընտրություններում: Դիտարկման եղանակներն են եղել կարճաժամկետ դիտորդությունը և քարոզարշավի ընթացքում մեդիայի մշտադիտարկումը: Առաքելության աշխատանքներն ամփոփվել են զեկույցում (https://uic.am/wp-content/uploads/2019/12/ArtsakhReport-RS_ARM.pdf), որտեղ արվել են նաև առաջարկներ, հետագա բարեփոխումների համար: Առաքելության մեջ ներգրավված են եղել 90 դիտորդ, 5 իրավաբան և 10-ից ավելի այլ մասնագետներ: Զեկույցի տպագիր տարբերակը կցվում է հայտին:

Ընդհանուր առմամբ, բացի Արցախցի դիտորդներից, առաքելությունում ներգրավվելու են նաև «Իրազեկ քաղաքացիների միավորում» հայաստանյան ՀԿ ծրագրերում ներառված փորձառու դիտորդներ:
«Իրազեկ քաղաքացիների միավորում» խորհրդատվական հասարակական կազմակերպությունն արդեն շուրջ 5 տարի մշտապես ներգրավված է հայաստանյան և միջազգային դիտորդական առաքելություններում:
Դիտորդական առաքելություններին մասնակցությունն ամրագրված է կազմակերպության ռազմավարության մեջ, և այս ընթացքում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» ոչ միայն մասնակցել և համակարգել է բազմաթիվ դիտորդական առաքելություններ, այլև ակտիվորեն հանդես է եկել ընտրական բարեփոխումների ջատագովությամբ և ընտրությունների ու ընտրական իրավունքների վերաբերյալ քաղաքացիների իրազեկմամբ:
Առաջին անգամ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» դիտորդական առաքելության մասնակցել է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շրջանակներում՝ 2015 թվականին տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների վերաբերյալ հանրաքվեի ժամանակ:

«Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության կազմում «Իրազեկ քաղաքացիների միավորումը» 2016 թվականին մասնակցել է Հրազդանում, իսկ ապա «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի» հետ միասին Գյումրիում և Վանաձորում տեղի ունեցած տեղական ընտրություններին:
2017 թվականի հունվարին տեղի ունեցած Ազգային ժողովի ընտրությունները դիտարկելու նպատակով ստեղծվել է «Անկախ դիտորդ» դաշինքը, որի առանցքային մասնակիցներից է հենց «Իրազեկ քաղաքացիների միավորումը»:
«Իրազեկ քաղաքացիների միավորումը» դիտորդական առաքելություններ է իրականացրել 2017-ի Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների, ինչպես նաև 2018 թվականի Ազգային ժողովի և Երևանի ավագանու արտահերթ և Հրազդանի ու Աբովյանի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ: Բացի սա, «Իրազեկ քաղաքացիների միավորումը» 2019 թվականին դիտորդական առաքելություն է իրականացրել նաև Արցախի Հանրապետության ՏԻՄ ընտրություններին:
Ուշագրավ է, որ Հայաստանում և Արցախում դիտորդական առաքելություններին զուգահեռ, «Իրազեկ քաղաքացիների միավորման» անդամները մասնակցել են նաև մի շարք միջազգային դիտորդական առաքելությունների, այդ թվում՝ 2016 թվականին Վրաստանի խորհրդարանական, 2018-ին Շվեդիայի համընդհանուր և Վրաստանի նախագահական ընտրություններին:
Բուն դիտորդական առաքելություններից զատ՝ «Իրազեկ քաղաքացիների միավորումը» 2018 թվականի Երևանի ավագանու արտահերթ ընտրություններից սկսած իրականացրել է նաև նախընտրական շրջանում մեդիայի մշտադիտարկում: Մասնավորապես, այդպիսի մշտադիտարկումներ իրականացվել են նաև 2018-ի արտահերթ խորհրդարանական և 2019-ի Արցախի ՏԻՊ ընտրություններից առաջ, ինչը թույլ է տվել պարզել, թե որքանով են լրատվամիջոցներն անկողմնակալ և հավասարաչափ լուսաբանում քաղաքական ուժերի նախընտրական արշավները:
«Իրազեկ քաղաքացիների միավորումն» իր գործունեության ընթացքում մշակել և մասնակցել է բազմաթիվ օրենսդրական բարեփոխումների, մասնավորապես՝ կապված ընտրական գործընթացների հետ: Կազմակերպությունն ակտիվորեն մասնակցել է 2016 թվականին մեկնարկած՝ նոր Ընտրական օրենսգրքում դրական փոփոխությունների ջատագովման աշխատանքներին և ներգրավվել է հայտնի «4+4+4» ձևաչափին (կառավարություն+քաղաքական ուժեր+քաղհասարակության կազմակերպություններ) և նոր ԸՕ-ի շուրջ բանակցություններին ներկայացրել քաղաքացիական հասարակության 200-ից ավելի կազմակերպությունների և մոտ 15 կուսակցությունների միասնական պահանջներ, որոնց ձևակերպման ֆասիլիտացիան ևս իրականացրել էր «Իրազեկ քաղաքացիների միավորումը»:
Հատկանշական է, կազմակերպության՝ ընտրությունների հարցում բարձր կոմպետենտությունը արձանագրել է նաև նախորդ՝ Հանրապետական կուսակցության կառավարությունը: 2016 թվականի նոյեմբերի 10-ի կառավարության N 1158-Ն որոշման

համաձայն, «Իրազեկ քաղաքացիների միավորումը» ներգրավվել է ընտրական տեղամասերում տեսանկարահանումը և ուղիղ հեռարձակումը կազմակերպելու, նույնականացման քարտերի ու անձնագրերի շտեմարանի աուդիտը կազմակերպելու, էլեկտրոնային սարքերով քվեարկողների գրանցման համակարգի ներդրման ընթացքը մշտադիտարկելու նպատակով ստեղծված հանձնաժողովում:
«Իրազեկ քաղաքացիների միավորման» ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանն արդեն հետհեղափոխական շրջանում, որպես վարչապետին կից ստեղծված ընտրական բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար, մասնակցել է Ընտրական օրենսգրքի փոփոխությունների փաթեթի մշակմանը: 2019 թվականին «Իրազեկ քաղաքացիների միավորումը» հանդես է եկել նաև Արցախում ընտրական բարեփոխումների առաջարկներով: Բացի սա, «Իրազեկ քաղաքացիների միավորումը» մասնակցել է Հայաստանի և Արցախի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բազմաթիվ որոշումների, ընտրությունների ժամանակ ոստիկանության գործողությունների ուղեցույցի մշակմանը, մասնակցել է ընտրական գործընթացի և ընտրական իրավունքի վերաբերյալ դասախոսություններին Հայաստանի քննչական կոմիտեում և Արցախի ոստիկանությունում:
«Իրազեկ քաղաքացիների միավորումը», հավատարիմ ընտրական գործընթացների բարելավմանն ուղղված իր առաքելությանը, հրապարակել և տարածել է հանրության շրջանում ընտրությունների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնող բազմաթիվ տեսանյութեր և հոդվածներ:
Մասնավորապես, կազմակերպությունը պատրաստել է ընտրությունների վերաբերյալ հանրամատչելի ու ամփոփ 30-ից ավել տեսահոլովակներ, որոնք հրապարակվել են թե՛ հեռուստատեսությամբ, թե՛ սոցիալական ցանցերում և ունեցել տասնյակ հազարավոր դիտումներ: Այդ տեսանյութերը հրապարակվել և տարածվել են 2015-ի սահմանադրական փոփոխությունների հանրաքվեից, 2017 և 2018 թվականների Ազգային ժողովի և Երևանի ավագանու, ինչպես նաև 2019-ի Արցախի ՏԻՄ ընտրություններից առաջ:

Ընդհանուր տեղեկություններ վերջին 3 տարվա ընթացքում իրականացված դրամաշնորհային ծրագրերի (հղում՝ առկա զեկույցներին, հաշվետվություններին) վերաբերյալ, ներառյալ՝ ծրագրի նպատակը, իրականացման ժամկետը, դրամաշնորհի չափը և դրամաշնորհատու կազմակերպությունների անվանումները (կոնտակտային անձանց տվյալները)

Իր հիմադրումից ի վեր «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ-ն իրականացրել է 16,200,000 ՀՀ դրամ արժողությամբ մեկ դրամաշնորհային ծրագիր՝ 2019 սեպտեմբերի 8-ի Արցախի ՏԻՄ ընտրությունների դիտորդություն: Առաքելության մեջ ներգրավված են եղել 90 դիտորդ, 5 իրավաբան և 10-ից ավելի այլ մասնագետներ: Կից աղյուսակում ներկայացված են տեղեկություններ դրամաշնորհի վերաբերյալ, իսկ պայմանագրի պատճենը կցված է հայտին:

Ծրագրի անվանումը	Արցախի Հանրապետությունում 2019 սեպտեմբերի 8-ին կայանալիք ՏԻՄ ընտրությունների ընթացքում դիտորդական առաքելություն
Ծրագրի նպատակը	Կարճաժամկետ դիտորդական առաքելության կազմակպում Արցախի Հանրապետությունում 2019 սեպտեմբերի 8-ին կայացած ՏԻՄ ընտրությունների ընթացքում, ընտրողների կրթություն, ստացված տվյալների հիման վրա առաջարկությունների ջատագովություն:
Իրականացման ժամկետը	26/08/2019 – 10/01/2020
Դրամաշնորհի համարը	ՎԱ-ԴՇ-19/02
Դրամաշնորհի չափը	16,200,000 ՀՀԴ
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ վարչապետի աշխատակազմ
Կոնտակտային անձ	Էդուարդ Աղաջանյան Հեռ.՝ (+37410) 52-09-33 Էլ. փոստ՝ eduard.aghajanyan@gov.am
Զեկույցի հղումը	https://uic.am/wp-content/uploads/2019/12/ArtsakhReport-RS_ARM.pdf

ԻՔՄ Ստեփանակերտի գրասենյակ ՀԿ
Գործադիր տնօրեն
Հովսեփ Ղազարյան
21.02.2020թ.

Կ.Տ.

«Իրազեկ Քաղաքացիների Միավորման Ստեփանակերտի Գրասենյակ» Խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens Stepanakert Office" Consulting NGO

ք. Ստեփանակերտ, Հեքիմյան փող. 4/69 4/69 Heqimyan str., Stepanakert

+374 97 515230, +374 55 468737 uic.stepanakert@gmail.com

Տեղեկատվություն

«Իրազեկ Քաղաքացիների Միավորման Ստեփանակերտի Գրասենյակ» խորհրդատվական հասարակական կազմակերպության՝ Արցախի Հանրապետությունում ընտրությունների դիտարկելու փորձառության մասին:

1. 2019 թվականի սեպտեմբերի 8-ի տեղական ինքնակառավարման ընտրություններ: 62 դիտորդ (չհաշված՝ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հայաստանյան ՀԿ-ի 69 դիտորդները): Բաղադրիչներ՝ մեդիա-մոնիտորինգ, կարճաժամկետ դիտորդություն և հանրային իրազեկման արշավ: Ֆինանսավորող՝ ՀՀ Վարչապետի աշխատակազմ: Հավատարմագրման մասին տեղեկատվություն (ԱՀ ԿԸՀ կայքում)՝ http://cecnkr.am/%d5%bf%d5%ab%d5%b4-8-%d5%bd%d5%a5%d5%ba%d5%bf%d5%a5%d5%b4%d5%a2%d5%a5%d6%80%d5%ab-2019-%d5%a9/ համացանցային հղմամբ: Դիտորդների ցանկը՝ կից (1 թերթ):

Հովսեփ Ղազարյան
Գործադիր տնօրեն
21.02.2020թ.

Կ.Տ.

1	Ավանեսյան Լարինա Էլմանի
2	Նունե Լալայան Սերգեյի
3	Տիգրան Գրիգորյան Սամվելի
4	Ռուզաննա Սեյրանյան Սեյրանի
5	Անդրանիկ Վարդանյան Սերոժի
6	Առուստամյան Դավիթ Վարդանի
7	Արմեն Խաչատրյան Արսենի
8	Անի Ամիրյան Արմենի
9	Իրինա Գաբրիելյան Գարիկի
10	Միրա Դանիելյան Յուրիկի
11	Լուսինե Առուշանյան Սերգեյի
12	Առստամյան Ամալիա Ապրեսի
13	Համբարձումյան Շուշան Աշոտի
14	Ցվետլանա Բաղմանյան Գեորգիի
15	Դանիելյան Արմինե Ռաֆիկի
16	Մերի Գրիգորյան Մավրիկի
17	Միքայելյան Տաթևիկ Ահարոնի
18	Ամիրխանյան Դավիթ Գրիշայի
19	Առստամյան Լուսինե Սամվելի
20	Խաչատրյան Ալիսա Ալիկի
21	Միրզոյան Լիդա Նիկոլայի
22	Մուսայելյան Մարիա Գագիկի
23	Պետրոսյան Կարինե Գարիի
24	Ավետիսյան Դավիթ Գագիկի
25	Ասրյան Վազգեն Վաչագանի
26	Մնացականյան Ինգա Սեյրանի
27	Պարույր Մարտիրոսյան Ռաֆիկի
28	Միրզոյան Լիզա Նիկոլայի
29	Նարինե Գրիգորյան Մավրիկի
30	Աղաջանյան Արտուր Անդրանիկի
31	Սարգսյան Արինա Արսենի
32	Անուշ Ղահրամանյան Իվանի

33	Գրիգորյան Նորայր Ալբերտի
34	Մուսայելյան Ինեսա Աշոտի
35	Խաչատրյան Սմբատ Վիտալիի
36	Տաթև Միքայելյան Ահարոնի
37	Թամարա Ավանեսյան Սեյրանի
38	Արևհատ Միրզոյան Սուրենի
39	Արարատ Գրիգորյան Էդվարդի
40	Սոսե Քոչարյան Արազի
41	Կրիստինա Դանիելյան Հրայրի
42	Նորայր Ղահրամանյան Միքայելի
43	Աբրահամյան Ինգա Արսենի
44	Գեղամ Հակոբջանյան Սամվելի
45	Համբարձումյան Դավիթ Սեդրակի
46	Ավագիմյան Արամ Վազգենի
47	Գրիգորյան Նորայր Ալբերտի
48	Պետրոսյան Պետրոս Արմենի
49	Խաչատրյան Անժելիկա Էրիկի
50	Սարգսյան Արսեն Արմենի
51	Ավագյան Արտուր Արմենի
52	Հակոբ Հակոբյան Արայի
53	Լալայան Դավիթ Արտուրի
54	Ղազարյան Ալբերտ Արմենի
55	Հայրիյան Միհիթար Էդուարդի
56	Պետրոսյան Էմմա Արարատի
57	Խասապետյան Հարութ Արմենի
58	Իսրաելյան Արմեն Սեյրանի
59	Աբրահամյան Կամո Վարուժանի
60	Հակոբյան Տիգրան Կարոյի
61	Աղաբեկյան Ստեփան Ալեքսանդրի
62	Ասրյան Անուշ Վաչագանի

«Իրազեկ Քաղաքացիների Միավորման Ստեփանակերտի Գրասենյակ» Խորհրդատվական ՀԿ
"Union of Informed Citizens Stepanakert Office" Consulting NGO

ք. Ստեփանակերտ, Հեքիմյան փող. 4/69 4/69 Heqimyan str., Stepanakert

+374 97 515230, +374 55 468737 uic.stepanakert@gmail.com

ՀՀ վարչապետի աշխատակազմ,
Արցախի Հանրապետությունում 2020 թվականի մարտի 31-ին կայանալիք նախագահական և խորհրդարանական ընտրություններին դիտորդական առաքելության իրականացման դրամաշնորհային մրցույթի մրցութային հանձնաժողովին

ԴԻՄՈՒՄ

Հանձնաժողովի հարգելի նախագահ, քարտուղար և անդամներ,

Խնդրում ենք ընդունել «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ-ի կողմից ներկայացվող «Արցախի Հանրապետությունում 2020 թվականի համապետական ընտրությունների դիտորդական առաքելություն» ծրագրի մրցութային հայտը և տրամադրել դրամաշնորհ:

Կից ներկայացնում ենք՝

1. Ծրագիրը (16 թերթ),
2. Ֆինանսական նախահաշիվը՝ համաձայն կից ձևի (1 թերթ),
3. 2019թ սեպտեմբերի 8-ի ԱՀ ՏԻՄ ընտրությունների 50-ից ավել դիտորդով կարճաժամկետ դիտարկման զեկույցը (1 գրքույկ),
4. Տեղեկատվություն ընտրություններ դիտարկելու փորձառության մասին և դիտորդների ցանկ (2 թերթ),
5. Վերջին 3 տարվա ընթացքում 10 միլիոն դրամից ավել ստացված դրամաշնորհի պայմանագրի պատճեն (6 թերթ),
6. Ծրագրում նախատեսվող հիմնական աշխատակազմի ինքնակենսագրականները և համաձայնությունները (14 թերթ):

Կանխավ շնորհակալ եմ համագործակցության համար:

Հարգանքով՝

Հովսեփ Ղազարյան
Գործադիր տնօրեն
21.02.2020թ.

Կ.Տ.

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ (CV)
ԴԱՆԻԵԼ ԻՈԱՆՆԻՍՅԱՆ

ԱՆՁՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անուն՝ Դանիել Արայի Իոաննիսյան
Ծննդյան տարեթիվ՝ 27 նոյեմբերի 1987
Սեռ՝ արական
Ազգություն՝ հայ
Ամուսնական կարգավիճակ՝ ամուսնացած
Քաղաքացիությունը՝ միայն ՀՀ
Լեզուների իմացություն՝ հայերեն (մայրենի), ռուսերեն (C2), անգլերեն (C1), իսպաներեն (A2) և գերմաներեն (A1)
Գիտական աստիճանը՝ Ֆ.Մ.Գ. մագիստրոս
Հեռախոսահամար՝ +374 11 355042, +374 93 742244
Էլեկտրոնային փոստ՝ danioanis@gmail.com

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

1995-1998 Ա. Մռավյանի անվան դպրոց, Երևան, Հայաստան
1998-1999 Տարրական դպրոց, Մյունխեն, Գերմանիա
2000-2001 Արգոս քոլեջ, Վալենսիա, Իսպանիա
2001-2005 Ա. Մռավյանի անվան դպրոց, Երևան, Հայատան
2005-2009 Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետ (Տեսական ֆիզիկայի բաժին), բակալավրիատ, Երևան, Հայաստան
2009-2011 Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետ (Աստղաֆիզիկայի ամբիոն), մագիստրատուրա, Երևան, Հայատան

ԱՇԽԱՏԱՆՔ

2010 հունիս – օգոստոս - Հետազոտող Միջուկային հետազոտությունների եվրոպական կենտրոնում, Ժնև, Շվեյցարիա
2010 օգոստոս – 2011 հունիս - ԱԺ պատգամավոր Լարիսա Ալավերդյանի օգնական, Երևան, Հայաստան
2010 սեպտեմբեր – 2010 հունիս- Ուսուցիչ «Գալիոտ» ավագ դպրոցում, Երևան, Հայաստան
2011 հունիս – 2013 դեկտեմբեր- Գիտաշխատող Ա. Ալիխանայանի անվան Երևանի Ֆիզիկայի ինստիտուտում
2012 հոկտեմբեր - 2015 հունվար- Սյունյակավար «ՀԵՏՔ» պարբերականում, Երևան, Հայաստան
2014 մարտից առ այսօր- Հիմնադիր և ծրագրերի համակարգող «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ում, Երևան, Հայաստան
2015 հունվարից – 2017 սեպտեմբեր- Թղթակից և ուսումնական հարցերով փորձագետ «Հայկական ժամանակ» օրաթերթում, Երևան, Հայաստան
2016 հունիս – 2017 հունիս- Փորձագետ, դասընթացավարների դասընթացավար և մեդիա համակարգող «Անկախ դիտորդ» նախաձեռնությունում, Երևան, Հայաստան

2018 հունվար – փետրվար- Էներգետիկ ոլորտում կոռուպցիոն ներգործության փորձագետ, Թրանսպարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն, Երևան, Հայաստան

2018 դեկտեմբեր՝ «Անկախ դիտորդ» դիտորդական առաքելության շտաբի համակարգող:

ՀԱՆՐԱՅԻՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2007 մայիս –2011 հունիս «Ազգային ուսանողական խորհրդի» հիմնադիր և փոխնախագահ

2007 հուլիս –2014 հունվար- «Ժառանգություն» կուսակցության անդամ

2008 փետրվար –2010 հունիս- «Ժառանգություն» կուսակցության «Հայք» երիտթևի համանախագահ և խոսնակ

2010 մարտ – հունիս- «Ուսման իրավունք» շարժման համակարգող

2013 մարտ - 2013 մայիս- «Բարև Երևան» դաշինքի սահմաններում ընտրախախտումների դեմ գործողությունների համակարգող, Դաշինքի ներկայացուցիչը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և Վարչական դատարանում

2013 – «Բուն TV»-ով բաց դասախոսությունների շարք ֆիզիկայից

2015 դեկտեմբեր- «Քաղաքացի-դիտորդ» դիտորդական խմբի Երևանում շարժական խմբերի համակարգող

2016 մարտ – սեպտեմբեր - Ընտրական բարեփոխումների վերաբերյալ բանակցող խմբի անդամ

2018 հունվար – նոյեմբեր- Վարչապետին առընթեր ընտրական օրենսդրության բարեփոխումների հանձնաժողովի քարտուղար

2019 հուլիսից առ այսօր – Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի անդամ

2019 դեկտեմբերից առ այսօր – Կառավարության նշանակմամբ հանրային խորհրդի անդամ

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ

2010 և 2013՝ «Մեկ կաղ – մեկ ոտք» կինոփառատոնի հատուկ հիշատակումներ

2017՝ «Համընդհանուր իրավունքների մրցանակ – «Արդարության և թափանցիկության առաջմղում», Հայաստանում ԵՄ պատվիրակություն

2017՝ «Ամալյա Կոստանյանի անվան մրցանակ», Թրանսպարենսի ինթերնեյշնլ հակակոռուպցիոն կենտրոն

2018՝ «Կովկասի հերոսը», Կովկասյան հանգույց խմբագրություն

2019՝ «Ժողովրդավարության պաշտպան» մրցանակ, ԵԱՀԿ-ում 35 անդամ-պետությունների ներկայացուցչություններ

ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱԶԵԿ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԿ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԵԼՈՒ

ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Դանիել Արայի Իոաննիսյանս, սույնով հաստատում եմ, որ ծանոթացել եմ «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ կողմից ՀՀ վարչապետի աշխատակազմին ներկայացվող «Արցախի Հանրապետությունում 2020 թվականի համապետական ընտրությունների դիտորդական առաքելություն» դրամաշնորհի հայտին, հայտում իմ մասնակցության պայմաններին և պարտականություններին և հաստատում եմ, որ դրամաշնորհի հաստատման դեպքում պատրաստակամ եմ ներգրավվել «Իրազեկ քաղաքացիների միավորման Ստեփանակերտի գրասենյակ» ՀԿ դիտորդական առաքելությունում՝ հայտում ինձ վերաբերող աշխատանքի ծավալներին և ժամկետներին համապատասխան:

Դանիել Իոաննիսյան 20/02/2020